

ԲԱԺՆԵԳԻՆ


ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 Լ.
Վեցամս. 25 „

ԱՐՏԱՍԱՀՄՆ
Տարեկ. 13 Գր.
Վեցամս. 7 „

Ամերիկա
2 Տղ. 30 օգնդ
ԿԱՆԻՍԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՀՈԿՏ. 29 ՀԻՆԳԵԱԲԹԻ 1903

ԹԻԻ 279

ԱԶԳԱՅԻՆ

Կարտաճական խնդիրը

Վերջին թղթաբերով հասած Վերածնունդի մէջ էջմիածնայ թղթակցէն առնուած տեղեկութիւններ կը կարգաւոր, Ս. Կաթողիկոսի, Ներքին գործոց պաշտօնէի և Զարին միջեւ տեղի ունեցած բանակցութեանց մասին:

Ս. Կաթողիկոսը՝ Սինոդի կողմէ տրուած մերժողական որոշումը և միահամուռ հրաժարականը առնելուն պէս՝ ըստ օրինի նախ դիմած է Ներքին գործոց պաշտօնէին, որպէս զի յետաձգուի նախարարաց խորհրդոյ տուած որոշումը, հնարաւորութիւն տալով Իրեն անձամբ դիմելու Զարին և անոր տալ պէտք եղած բացատրութիւնը, բայց տեսնելով որ Ներքին գործոց պաշտօնեան չի պատասխանէր, այն ատեն ուղղակի Զարին շրջած է հետեւեալ հեռագիրը.

10 Օգոս. Պետերբուրգ

Նորին Կայսեր. Մեծ. Թագ. Կայսեր

Ձերդ Մեծ. ամենուրեքմած թագաւոր. Ներկայ օգոստ. 6ին մի հեռագրով դիմեցի առ Ն. Բարձր. Գեր. Ներք. Գործ. Նախարարին ըստաւուսեկրետար Պլեէին, խնդրելով որ նախարարական ժողովի բարձրագոյնս հաստատուած օրէնսդրութիւնը (պօլօթէնիա) Հայոց եկեղեցւոյ կա-

լուածներն ու դրամագլուխները պետական հաստատութիւնների կառավարութեան յանձնելու նկատմամբ յետաձգուի, տալով ինձ հնարաւորութիւն արկանել առ ոսոս Ձերդ կայսեր Մեծութեան ինձ հաւատացած հօտի, ամբողջ Հայ ազգի աղերսանքը յիշեալ օրէնսդրութեան վերաբերեալ իմ ամենահպատակօրէն միջնորդութեամբ հանդերձ: Զստանալով պատասխան Ներքին գործոց Պ. Նախարարից, համարձակուամ եմ դիմել անմիջապէս առ Ձերդ Մեծ. ամենահպատակօրէն խնդրելով թող տալ ինձ անձամբ արկանելու առ ոսոս Ձեր Մեծութեան ամբողջ Հայ հողեւոր հօտի աղերսանքը և մատուցանելու կարեւոր բացատրութիւններ և նկատումներն իմ կողմից, որ ինձ թելադրում է առ Ձերդ մեծութեան և առ հօտն ունեցած պարտքի զգացումը, նախարարական ժողովի օրէնսդրութեան կատարումը դադարեցնելու համար:

Ձերդ Կայսերական Մեծութեան հաւատարիմ հպատակ և ազօթաբար՝

Մ. Կ. Ա. Հ.

13 Օգոստ. 1903 Էջմիածին

Նորին Սրբ. Ամեն. Հայոց Կաթողիկոս

Ձերդ Սրբութեան ամսոյս 7ին տուած հեռագիրը ամենահպատակօրէն պեկուցանելոյ յետոյ, թագաւոր Կայսրը Բարձրագոյնս բարեհաճեց մերժել Ձեր միջնորդութիւնը, նախարարական ժողովի տարւոյս յունիսի 12ին բարձրագոյնս հաս-

տատուած օրէնսդրութեան դործագորութիւնը յետաձգելու նկատմամբ :

Ընդ նմին Ն. Կայս. Մեծ. բարեհաճեց ինչ յանձնել Ձեր օգ. 10ին տուած հեռագիրը, ի հետեւումն որոյ յայտնում եմ Ձեզ աւելի մանրամասն ցուցումներ ռութիւ եղած է կարգադրութիւն իսկ դիմագրութեան շարունակելու գէտքում, կարելի եղած հետեւանքների մասին, ինչպէս և Ձեր անձամբ Ն. Կայս. Մեծութեան ներկայանալու նկատմամբ արած միջնորդութեան մասին :

Պէտէ

Լոնտոնէն քաջուած Ռիւթէրի մէկ հեռագիրը կը ծանուցանէ թէ Սագունի անուն հայ մը որ անդամ է ելեր յեզ. զօմիտէի մը, սպաննուած է Բէքհամ քաղաքին մէջ : Ոճրագործը փախած է : Թէև հեռագիրը որոշակի չի գրեր, բայց եթէ սպաննուողը հին Հնչ. մասին պատկանող Սագունին է, կասկածողներ կան թէ միմիայն երկու կեդրոններու մէջ յառաջ եկած կայլենեան դրութեան շարունակութիւնն է, որ դարձեալ նոյն կերպի պիտի պատճառէ ամենուս :

Մենք խորհուրդ պիտի տայինք այդ պարոն հերոսներուն, երթալ բնակելու Առնպուտուքի մէջ, ուր այդ օրինակ զանքնա զան ըսելով եղբայրասպան ոճիրներ սովորական դարձած են :

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՆԸ

Քաղաքավարութիւնը ընկերական կեանքի մէջ ամմենն պիտանի բանն է : Ինչ որ է աղը կերակուրին մէջ, նոյնն է քաղաքավարութիւնը ընկերութեան մէջ :

Բայց քաղաքավարութիւնը, ինչպէս որ կը կարծուի, արտաքին չոր ու ցամաք ձևակերպութիւններու մէջ չը բովանդակիր : Քաղաքավարութիւնը աւելի ներքին ու բարոյական է քան արտաքին ու ծիսական : Բարեկրու, խօսելու, նիստուկացի մէջ անթերի վարմունք ունենալը քաղաքավար ըլլալ ըսել չէ : Արտաքին ձևակերպութիւնները, չը չափազանցելու պարմանաւ, պիտանի են, բայց քաղաքավարութեան էականը

այդ չէ : Առանց բարոյական սկզբունքի, լոկ ձևակերպութիւններու վրայ կայացած քաղաքավարութիւնը կեղծ ու շինծու է :

Քաղաքավարութեան էական պայմանն է ապրիլ առանց ի վնաս ալից, ճշմարտագէտ քաղաքավար մարդ մը չկրնար հանգուրժել որ յետին արարած մը վնաս կրէ իրեն պատճառաւ : Անոնք որ այլոց վնասուն ու դժբաղդութեան պատճառ դառնալէ յետոյ կրնան գիշերը հանդիսաբանալ, չեն կրնար երբէք քաղաքավար կոչուիլ որքան ալ որ ընկերական յարաբերութեան մէջ իրենց քաղաքավարական ձևակերպութիւնները հիացում ներշնչելու աստիճանին մէջ ըլլան : ճշմարտագէտ քաղաքավար մարդը կուտայ ուրիշներուն ալ լիապէս բոլոր այն իրաւունքը զոր իրեն համար կը սահմանէ, կը յարգէ այլոց աղատութիւնը այնքան որքան կ'ուզէ որ իրը յարգուի : ճշմարտագէտ քաղաքավար մարդը կընէ այլոց ճշգիւ ալն բաները զոր կուզէ որ ուրիշները ընեն իրեն, և կամ բնաւ չընեն այն բանը զոր չուզէ որ այլք ընեն իրեն :

Քաղաքավարութիւնը առաջին գիտելիքն է որ պէտք է աւանդուի, և վերջին կրօնքն է որ պէտք է պահուի : Ս. ՄԱՐԻԱՅԱՆ

ՔԱՂԱՔԱՎԱՐ

Այսօր առնուած հեռագիր մը կը ծանուցանուցանէ թէ Կովկասի կառաւարիչ Կալիցին իշխանը ամսոյս 27ին ինքիւն ինք կառքով պտոյտ մը ըրած պահուն 3 անձինք վրան նետուելով թեթեալէս վայն կը վիրաւորեն գլխէն, ու խոջ առած միջոցնուն՝ զաւազներէն կը սպաննուին :

— Սուլթանին 17 տարեկան մէկ որդին՝ Պէտրէտին էջ. անցեալ շաբթու մնաեր է :

— Իսալիոյ նախարարութիւնը հրաժարած է Կերեի թէ պատճառը Ձարին Իտալիա ընելիք այցելութեան յետաձգուիլը եղած է, որուն առիթ տուած էին սօսիալիսթներուն Ձարին դէմ ըրած ցոյցերը :

— Պուլկար յեղափոխականներ կը յանձնարարեն Մակեդոնացիներուն կաթոլիկ կրօնքը ընդունիլ, ազատելու համար հալածանքէ ու կոտորածէ : Կը կարծուի թէ ասով իրենց նպատակն է ռուսերը գրգռել ի նպաստ իրենց :

— Ռուսիա և Աւստրիա իրենց կողմէ մէյմէկ

ներկայացուցիչ պիտի նշանակեն Մակեդոնիոյ բարենորոգմանց քննիչ հիւմի բաշայի իբր խորհրդական :

— Նախորդ շաբթուան հեռագրի մը նայելով, Մակեդոնիոյ բարեկարգութիւնը Աւստրիոյ և Ռուսիոյ պիտի յանձնուէր : բայց այս շաբթուանուած հեռագիր մը կը լռէ թէ այդ բանը եւրոպական մէկ քանի տէրութեանց գործին չէ եկած, որմէ դարձեալ պիտի օյտուի թուրք կառավարութիւնը :

— Դուռը հրաման ղրկած է Իզմիրի և Ատանայի զօրաբանակներուն ընդ փոյթ գէպի եէմէն ճամբայ ելլելու, վասն զի արշաւաց վրայ գըրուած նոր տուրքին պատճառաւ եէմէնի և Ասիրի մէջ ռազմամարտ թիւն ծագած է :

ԹԱՏՐՈՆ

Յառաջիկայ շաբաթ գիշեր (կոկոս. 31) Բիրումիս քաւարոնին մէջ Հայ դերասանական խմբին կողմէ առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացունի Բարիզու Միսր փողոցի սփիւղը անուն քաւարոյից քաւարոյի մը, որուն պիտի յաջորդէ ծիծաղաշարժ կասկերգութիւն մը, Պոլիարիսյէ նոր եկող Տ. եւ Տիկիկն Շաֆարեան պիտի մասնակցին սոյն ներկայացման : Խաչիկն վերջին փորձին ներկայ գտնուած ըլլալով, աշտմէն կը վստահեցնենք քաւարոյի մը թէ զոն պիտի մնան սոյն ներկայացումէն :

Թիւս մը համալիրէի արմուստագէտ Պ. Արշակունի առաջնորդութեամբ միջնաւարներուն Հայկական ու Եւրոպական ընկեր կոնրներ պիտի նուագեն որ աւելի փայլ մը պիտի տայ սոյն երեկոյթին :

ՖԷՄԻՆԻԶՄ

«Արտեմիս» ծանուցանելով իր խմբագրութեան մը մը. Մառի Պէյլէրեանի պատկերով թիւնը ընդ Տիար Ափո նազչեանի, կ'աւելցնէ. «Այս առթիւ Տիար Ափո (ծնեալ Նազչեան) սրտի յօժարութեամբ ընդունեց յետ այսմ կոչուիլ իր ամուսնոյն մականունով Ափ Պէյլէրեան» :

Ի՞նչ անուն պիտի տանք : բաժնի այս յօժարութեան, Քէմիկիզմ. . . բայց կարծենք մինչև հիմակ ամէնէն կատարի ֆէմինիզմը մօքէն չէ անցուցած առաջարկել որ ամուսնութեան ատեն էրկամորդը իր մականունը կորսնցնէ ու աղջկան մականունովը յորջորջուի : Ասիկա կ'ենթադրու ազատագրութիւնը չէ, այլ էրկամարդերու գերութիւնը :

Եւ ի՞նչ շարունակենք այս արշաւանքով ֆէմինիզմը ընել, հեռու պիտի չըլլայ այն օրն ուր փեսան քիչիկէնով ու հարսն ալ բնականութեամբ պիտի ներկայանան քահանային առջև, մեծ Այոն արտասանելու համար :

Պատկի արարողութիւնն ալ բնականաբար հալկ պիտի ըլլայ բարեփոխել և «Արտեմիս»-ի ուղղութեան պատշաճեցնել :

Քահանան հարսին պիտի հարցնէ թէ՛ «Տէ՛ր է իր էրկանը» և փեսին թէ՛ «Հնազանդ է իր կնոջ» և պիտի աւելցնէ. — «Թողցէ զհայր, զմայր և զմականուն իւր և երկիցէ զյետ կնոջ իւրոյ» :

Վայ այն պարտապահանջներուն որոնք փեսին առնութեան ժամանակի ստորագրութեամբ մուրհակներ ունին և հարսնիքէն ետքը պիտի ներկայանան դրամին առնելու համար :

— Այդ ստորագրութիւնը իմն չէ, պիտի գոչէ էրկանը կնոջը փէշին ետև ապաստանած, իմ մականունն Չապէլեան է, հոն Մարկոսեան գըրուած է :

— Աղբար դուն Մարկոսեան չես :

— Չէ հիմակ, սրտի յօժարութեամբ Չապէլեան եղայ . . .

Արդեօք պարտապահանջն ալ, ֆէմինիզմի սիրոյն համար, սրտի յօժարութեամբ պիտի մեկնի՞ այս պատասխանով :

ԵՐՕՏ

ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

«Արտեմիս» խմբագրութիւն Օգոստ 11, ն ամուսնացեր է եղեր, ինչպէս որ կը ծանուցանէ նոյն հանդէսին Օգոստոսի թիւը. ուրեքն Հոկտեմբեր 11ին ամուսնացող Արտեմիսի խմբագրութիւն ո՞վ էր :

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐԶԻՆ ԿԵԱՆՔԸ

Բարիզի հանրաժանօթ դերասանուհիներուն և երգչուհիներուն հարցուեցաւ թէ ի՞նչ է գաղտնիքն իրենց յաւերժական երիտասարդութեան և մինչեւ վերջը գեղեցիկ եւ թարմ մնալուն, և թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ՝ հակառակ իրենց բուն գործունէութեան և յարատեւ աշխատութեան՝ չեն կորսնցներ իրենց կորովը, մինչ ուրիշ աւելի դիւրիւն տալարէզներու մէջ միւս կիները շուտով կը մաշին և կը թառամին։ Տիկին Սառա Պէրնար կըսէ թէ «Իմ տոկունութեանս գտղտնիքն այն է որ երբեք չեմ հանդիւր։ Յոգնութիւնը մղիչ ոյժս է, փոխանակ զիս ընկճելու, միշտ կը քշէ դէպ առաջ»։ Անփոփոխ կերպով կէս գիշերէն ետքը ժամ 3ին (Ը. Ե.) անկողին կ'մտնէ և միշտ ժամ 9ին անկողնէն կ'ելնէ։ Առողջութիւնը պահպանելու սովորական կանոններուն կամ նախզուշութեանց բնաւ կարեւորութիւն չի տար։ Ընդհանրապէս գոց կտուքով թատրոն կ'երթայ կուգայ, ուր կ'անցընէ ամէն օր 11 կամ 12 ժամ, առանց տեսնելու արեւուն լոյսը, և առանց զով կամ թարմ օդ շնչելու։ Ընդհանրապէս կ'ուտէ ձուկ և հաւկիթ, աւելի հաւկիթ, երբեմն օրական տասն հատ, և շամբանիայէ զատ ուրիշ ըմպելիք բերանը չի դնէր, ճարին երկու ամիս միայն տիկին Սառա Պէրնար Պէլ-Լի ամառանոցն երթալով՝ միշտ դուրսերն է, բաց կը պահէ պատուհանները, ի՞նչ տեսակ օդ ալ որ ընէ։ «Ամէն տարի սովորական փակեալ կեանքէս յանկարծ բացօթեայ կեանքի մը մէջ կը նետուիմ, ու բնաւ չեմ զգար յանկարծական փոփոխութեան արդիւնքը, բժիշկներս զարմացնելու աստիճան իսկ»։ Իր ապրելու կանոնն հետեւեալն է. — «Բնաւ նախզուշութիւն չեմ ընէր և անդադար կ'աշխատիմ տարին տասն ամիս»։ Այս կանոն ամէնուն համար յանձնարարելի չէ, սակայն տիկին Սառա Պէրնարի ամէն գործն արտասովոր է։

* Ընդհակառակն Տիկին Պառտէ, Տիկին Վորմըս Պարէզդա, Օր՝ Պուայեէ և Օր. Սէսիլ Սօրէլ, ամեէքն ալ բաց օդի հաւտացողներ են։ Քօմէտի-Պրանսէզի այս չորս դերասանուհիք կերակրոյ մասին ալ համաձայն են, և կ'ըսեն. — «Ամէնէն լաւ քաղաքականութիւնն է ուտել երբ անօթի

ես և խմել երբ ծարաւ ես»։ Եւ ամէնէն լաւ առաջնորդներն են անհատական ճաշակն ու ախորժակը։ Տիկին Ճէն Րէյտինկ հանգստի և հանգարտութեան վրայ մեծ հաւատք ունի, ի հեճուկս Սառա Պէրնարի։ Տիկին Ժանն Կռանիէ չըմբռնէր թէ ի՞նչ ըսել է առողջութեան հոգ տանիլ, «Ինչ օգուտ ունի առողջապահական կանոններու հետեւի, երբ առողջ ես, եւ երբ հիւանդ ես, բըժիշկ կայ, անոր դիմէ, Իմ բժիշկս շատ ճարտար է ինձ համար»։ Բարիզի երգչուհիներն ալ դերասանուհիներուն պէս անփոյթ են իրենց առողջութեան։ Օր. Տէլնայի միակ նախզուշութիւնն է պաղ շառնելու համար մետաքսեայ թաշկինակ մը փաթթել վիզը, երբ թատրոնէն դուրս կ'ելլէ։ Օր. Աքթէ ամէն առաւօտ պաղ ջուրի լոգանք կ'ընէ, ամէն օր պտոյտի կ'երթայ, տաքին ալ ցուրտին ալ, և կաթիլ մը դինի կամ ըմպելիք բերանը չի դնէր, բայց ասկէ դուրս ուրիշ հոգ չի տանիր իր ձայնին համար։ Օր. Իվէդ Կիլպէռ ալ պաղ ջուրով լոգանք կ'ընէ, և կը յանձնարարէ մարմինը քերելու գրութիւնը։ Թատերաբեմէն դուրս, բնաւ ներկ չի քսուիր, եւ շրթունքը կարմիր չի ներկեր։ Օդ, տասն ժամ քուն, և ոչ երբեք գիշերային ընթրիքներ առանձին բարեկամներու հետ, ահա Օր. Կիլպէռի առողջական կանոնները։

Թարգմ.

ԳԱՇՆԱԿ

Ծ Ե Շ Ա Ղ

Ամուսնացեալ մը ուխտեալ ամուրիի մը կըսէ հեղինութեամբ։

— Ամուրի մը կէս մարդ մըն է։

— Այո, կը պատասխանէ ամուրին, ամուսնացեալն ալ կէս մարդ մըն է, իր միւս կէսն ըլլալով իր ամուսինը։

— Կը կարծէի թէ, ըսաւ մարդ մը իր բարեկամին, խօսքիդ տէրը մարդ մը չեմ, բայց միտքս փոխեցի։

— Էհ, ուրախ եմ պատասխանեց բարեկամը

բայց ի՞նչ պատահեցաւ որ կարծիքդ չտկեցիր իմ վրաս .

— Կը յիշե՞ս, տասը ոսկի ինձմէ փոխ առիր .

— Այո .

— Լսու , այդ դրամը ընդունած տտենդ ըսիր որ յաւիտեան պարտական պիտի ըլլաս ինձի, ու կը տեսնեմ որ այդ օրէն ի վեր խօսքդ պահած ես . . .

Երիտասարդ մը Արիստոտէլի ներկայութեանը կը պարծենար թէ ինքը շատ գիւրգիւր կարգացած է .

— Էհ, ըսաւ փիլիսոփան , շատ ուսողները չեն որ ամենէն առողջ և ամենէն գեր կ'ըլլան , այլ կերածներն լաւ մարտողները :

Անգաղտնապահ մարդուն մէկը իր բարեկամին գաղտնիք մը կը յայտնէ և կ'աղաչէ որ ուրիշին չըսէ .

— Անհոգ եղիք բարեկամս , կը պատասխանէ խօսակիցը , ձեզի պէս գաղտնապահ պիտի ըլլամ :

— Ո՛հ, օրիորդ, եթէ գիտնայի՜ք , խենթի մը պէս կը սիրեմ զձեզ .

— Կեցիք ուրեմն երթամ հօրս իմաց տամ , վասն զի ինքը խենթերու բժիշկ է .

Գիւպացի մը իբրև կառավար կը ներկայանայ մեծ կառատէրի մը .

Աղէկ կառք վարել գիտե՞ք .

— Օ՛հ, ամենեւին խօսք չուզէր .

— Քաղաքին թաղերը ու փողոցները լաւ գիտե՞ք .

— Հարցնելնիդ աւելորդ է .

— Գիտե՞ք նաև թէ յաճախորդներուն հետ քաղաքավար պէտք է ըլլար մանաւանդ պարկեշտ ու հաւատարիմ . և եթէ կառքին մէջէն թղթապանակ մը գտնուի հարիւր հազար ֆրանք պարունակող , ի՞նչ կ'ընէք .

— Օ՛հ, ատ ալ կը հարցուի՞ մի . . . դրպանս կը նետեմ . . .

ՄԻԻԹԵՆԵՎԻԷ

Ամերիգատա պիր հայտուտ գումբանեասը թէչէքքիւ էտիպ շըմէնտըֆէր գումբանեալարընա միւրաճառթլա մէսէլա շու գատար պին ֆր . ֆալան եէրէ պրագըլմատըղը հալտէ շըմէնտըֆէր եօլլընը տինամիթլէ աթաճագլարը եօլլընտա թէհտիտլէրտէ պուլընմագտա իմիշ , Նօրթըրըն-Բասիֆիգ գումբանեասը իսթէնիլէն 250,000 ֆրանքը վէրմէտիկինտէն պու տէֆա տէմիր եօլլու հայտուտար թարաֆընտան տինամիթլէ աթըլմթշ իսէ տէ պիր կէօնա վէֆիյաթ -վուգու պուլամըլ տըր :

— Նէշր օլլընան եէնի պիր սթաթիսթիքէ նազարէն Մօսկուատա պուլլընան միլիոնէրլէր իլէ տիլէնճիլէր՝ ինկիլթէրատաքի միլիոնէրվէ տիլէնճիլէրտէ չօգ զիյատէ իմիշ :

— Շիմտի Պրանսատա իւշտէֆա աշ օլմագ մէճպուրի տիր , պիրինճիսի տիւնեայա կէլտիլինտէ , իքինճիսի 11 եաշընտա իքէն , վէ իւշիւնճիսի 21 եաշընտա օլտուլու վագըլթ :

— Զուիցերիանըն քիւշիւք մէմալիքինտէ էլեւէվմ 2000 հօթէլ մէվճուտ օլուպ , պուլլարտա 35,000 խըզմէթքեար չալըլմագտա իմիշ : Հէր եաղ մէվսիմինտէ 330,000 քիշի Զուիցերիայա սէյահաթ էտիպ , 4 միլիոն ինկիլիկ լիրատը սարֆի իտէրլէրր իմիշ :



Իքի չօճուգլար .

— Գէորդ ծօ , սէն դա՞շ եաշընտա օըն ,

— Էյիճէ պիլմէմ ամմա՛ աղապամլա օլտուլում վագըլթ՝ օն պիր եաշընտայըմ , վալիտէմ իլէ պիր եէրէ կիտէրսէմ՝ սէքիզ եաշընտա .

—Մարտիրոս, տօղրու սէօյլէ, մէքթէպտէ օ-
գումադ էօյրէնի՞ն օրմուտուն .

—Աղամուճա, տօղրու սէօյլէյէճէքսէմ, իս-
յըր .

—Եազմադ .

—Խայր .

—Թօհաֆ շէյ, էօյլէ իսէ թէքմիլ կիւնտէ
յէ՞ եաբարըն օրատա .

—Նէ՞ եաբաճարմ, ապշամ օլուպ մէքթէպտէն
աղատ օլմամըլա պէքլէրիմ .

—Միւսիւ տօքթուր, շու պէնիմ ալաղըմըն
րըմսքիզմի իշիւն նէ՞ թէրթիպ միւնասիպ կէօրիւր-
սինիզ .

—Յապր իթմէք վէ բըմաթիզմինիզ իլէ
զարտաշ կիպի կէշինմէք .

Միւսիւ Ֆէրնան, բազար կիւնիւ քիլիսէյէ
կիթաինիզ մի .

—Էվլէթ .

—Նէ՞ կէօրաթինիզ .

—Գատընլարըն թուպէթինի .

Ֆիլիթ

1000 ֆր. շահած է Հրէից Բարեգործական
Ընկ բազմատոմէն (թիւ 8405) Կարապետ Ստե-
փանեան՝ կօշկակար ի Սարաֆիէ .

Ա Ձ Դ

 Հրատարակուեցաւ

ԲԱՆԻՆԻ Կրականութեան և Կեղարուեստի
պատկերազարդ վեց տետայ հանգէսի Ա. գիրքը
իւր տեսակին մէջ միակը որ կուգայ «Արաքսի»
ատկը բռնել Բաժնեկիւնն է երկու գիրք 12 ֆր.
«Ուսման գիրքը կարժէ 7 ֆր. արժէքը չլճար-
ուած յանձնարարութիւնները տնտեսաւարտան կը
մնան .

Դիւն Դօնքուստ Էմբեռնասիօնայ Այեֆան-
սի Էմիքս հասցէին .

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

«Հայկերի» սպարանին մէջ դիւրամասշտի գնով
կը սպարանին առեւտրական տներու համար
աւելն յեզմէ՝ Բարիգեան վերջին դրոքեանք հե-
սափրաւաւ, պահեւազարդ եւ գունաւոր վա-
րիկ ազդարարութիւններ. կը սպարանին նաեւ աշ-
ցեւոս, հասցէտու, հարսանեկան հրաւիրազիւ
մահազ, մանակագրի, պահարան, տնտես. եւն.
Ուրիշ ֆաշիստներ եղած յանձնարարութիւն
աշ փութով կը կատարուին .

ՅԱՆՈՐ ԳԱՐԱԿԷՕՂԵՐՆ

Սուգ-էլ-էքքարին

Կը ծանուցանէ իւր յարգոյ յանձնարարաց քե-
ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս յատկապէս
քերել տաւ է Զինական, Հնդկական եւ Յայ-
նի ընտիր եւ հոստէս քեյեր, որոնց գործածութիւ-
նը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է .
Կը պատկանէ նաեւ մազի համար ընտիր ներ-
կեր աւելն գոյնէ . Դիւները շարխար .

Հետեւեալ գիրքերը կը ծխարին Տիւր Կա-
րապետ Աստուածատի ֆով . Եէքիֆ բաշա .

Փիլիկ Աղբօր Հարսնիք	որշ. ողջ
Այինէի Լեքայիթ, հայաստ. եւ	1,5 "
բոֆաքստ գոարձալիֆներ	4 " "
Դրպանի Երազսիւն	50 սնդիւ
Դագանձ Դօնա, գօմէսի	20 փոյ
Մանձապէյրիկ Միսֆաւաք	20 "

ԱՇՈՏ ՓԱԼԱԵԱՆ

Տպարանական աւելն տեսակ գործերու կատար-
անիս, փորագրիչ, քէ տաւիսի եւ քէ պղինձի վրայ,
կը պատրաստուին նաեւ պատրաստականակա՞ն կնիֆ-
ներ՝ մեծադէ եւ փառչմէ .
Այեֆանդիս, Տրաւիֆ փողոց թիւ 22